ուսման և կրթութեան Հայ մանկուցն գործադրեցան 'ի հինգերորդ ոսկեդարուն Հայ գրականութեան, 'ի ժամանակս արժանայիշատակ թարգմանչացն մերոց մեծին Սահակայ պարթևին ասեմ, և սրբոյն Մեսրովբայ թարգմանչին, որք յետ զՀայկական գիրն և զգրականութիւն ստեղծանելոյ և կարգաւորելոյ, յամենայն վանօրայս հաստատեցին զդպրոցս և կրթեցին զմանկունս Հայ դպրութեամբ»։

«Վանօրայք Հայաստանի այսպէս պիտանաւորութեամբ կացին մնացին ցեօթներորդ դարն, յորում թշնամիք յամենայն կողմանց յարձակեցան 'ի Հայաստան և խանդարեցին զբարեկարգութիւն, այն է».

«Արապացիք և պարսիկք 'ի հարաւոյ, Ցոյնք և Հագարացիք յարևմտից. Թաթարք, Ալանք և այլք 'ի հիւսիսոյ յարձակեալ՝ արարին զՀայաստան թատրոն պատերազմի, ուստի և դադարեցան ամենայն կարգ և կանոն»։

«Վանօրայք Հայաստանի թէ և ոչ ըստ առաջնոյ կարգաւորութեան կարէին պիտոյանալ հասարակաց կրթութեանն, սակայն ցվերջին այս ինն և տասներորդ դարն, ուրեք ուրեք նշմարէին հետք դպրոցական կրթութեանն»։

«Դպրեվանքն Ձիրակայ, վարդապետարանն Արշարունեաց, Փիլիսոփայարանն Տաթևու, և վարժարանքն Սևանայ, Մաքենեաց, և այլք, բացայայտ ապացուցանեն նախնի բարեկարգութիւն վանօրէից Հայաստանի, բայց աւաղ . . . . . հետքն անգամ այն հռչակաւոր դպրոցաց չերևին 'ի Ձիրակ, յԱրշարունիս և 'ի Տաթև, ի Սևան, 'ի Մաքենիս, 'ի Թեղենիս կայն, և ոչ իսկ ուրեք այլ տեղիս»։

Այսպէս և սուրբ Ստեփաննոսի վանքն Սաղիանու, որ ըստ պատմութեան և աւանդութեան բնակչաց տեղւոյն և գաւառին՝ հիմնեալ է օրհնութեամբ սրբոյն Մեսրովբայ, երբեմն դպրավանք Աղուանից անուանեալ (Ձիրուանայ երկրի այժմ Ջամախի գաւառի Բագուայ նահանգի) և ըստ արձանագրոյն՝ համբաւաւոր վանականս ընծայեալ ազգին 'ի ծառայութիւն, զորօրինակ. Մովսէս Կաղանկատուացի պատմիչ Աղուանից, ՃԷ. դարուն։ Սողոմոն Սրբակեաց եպիսկոպոսն (անձրևաբեր անուանեալն),